

Պատմություն 2016

ՀԱՐՑԱՏՈՄՍ

11 - րդ դասարան

I. ԹԵՍՏՍԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

(17 միավոր)

1) <<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>

(12 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1-8-րդ առաջադրանքներ: (0,5 X 8 = 4 միավոր)

1. Ե՞րբ պարսից շահը ճանաչեց Սյունիքում ստեղծված հայկական իշխանությունը և դաշինք կնքեց Դավիթ բեկի հետ:
 - 1) 1722 թ.
 - 2) 1723 թ.
 - 3) 1724 թ.
 - 4) 1727 թ.
2. Պարսկաստանի ո՞ր քաղաքում է ծնվել Հովսեփ Էմինը:
 - 1) Համադան
 - 2) Սպահան
 - 3) Թավրիզ
 - 4) Նոր Ջուղա
3. Ե՞րբ Նիկոյալ I ցարը հրամանագիր ստորագրեց Հայկական մարզ կազմավորելու վերաբերյալ՝
 - 1) 1828 թ. մարտի 11-ին
 - 2) 1828 թ. մարտի 21-ին
 - 3) 1830 թ. մարտի 31-ին
 - 4) 1836 թ. մարտի 11-ին
4. 1882 թ. Մոսկվայում մի խումբ հայ ուսանողների կողմից հիմնված <<Հայրենասերների միությունը>> գաղտնի կերպով տպագրում էր առաջին հայ քաղաքական լրագիրը՝
 - 1) ՍԱԳատամարտ
 - 2) ՍՀյուսիսսփայլ
 - 3) ՍԱԳատության ավետարեր
 - 4) ՍԵրիտասարդ Հայաստան
5. Բարենորոգումների մայիսյան ծրագիրը թուրքական սուլթանին հանձնվեց՝
 - 1) 1895 թ. մարտի 11-ին
 - 2) 1895 թ. մայիսի 11-ին
 - 3) 1895 թ. մայիսի 21-ին
 - 4) 1896 թ. մարտի 21-ին
6. Անդրանիկն իր զինակիցների հետ Ս. Առաքելոց վանք մտավ՝
 - 1) 1900 թ. նոյեմբերի 1-ին
 - 2) 1900 թ. նոյեմբերի 3-ին
 - 3) 1901 թ. նոյեմբերի 3-ին
 - 4) 1901 թ. նոյեմբերի 27-ին
7. 1912 թ. կաթողիկոսական կոնդակով ո՞վ նշանակվեց Եվրոպայում Ամենայն հայոց կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ:
 - 1) Պողոս Նուբար փաշա
 - 2) Ավետիս Ահարոնյան
 - 3) Ալեքսանդր Մանթաշյանց
 - 4) Գարեգին եպս. Հովսեփյան
8. Ո՞վ ստորագրեց պետական լեզվի մասին Հայաստանի առաջին հանրապետության օրենքը:
 - 1) Ավետիսյան Ահարոնյան
 - 2) Նիկոլ Աղբալյան
 - 3) Ալեքսանդր Խատիսյան
 - 4) Լևոն Շանթ

բ. Լրացնել պատասխանը:

(1 X 4 = 4 միավոր)

1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:
(1 միավոր)

- ա) Հնչակյան կուսակցության ստեղծումը
- բ) Երիտթուրքական հեղաշրջումն օսմանյան Թուրքիայում
- գ) <<Բանկ Օտտոմանի>> գործողությունը Կ.Պոլսում
- դ) Մ. Կուկունյանի արշավանքը
- ե) Խանասորի արշավանքը

1	2	3	4	5

2. Մշակութային իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության :
(1 միավոր)

- ա) Հայկական նոր ձայնագրության ստեղծումը Հ. Լիմոնճյանի կողմից
- բ) <<Տարեգրություն>> պարբերականի հրատարակումը Վենետիկում
- գ) <<Ազդարար>> պարբերականի տպագրումը Մադրասում
- դ) <<Նոր բառգիրք Հայկազյան լեզուի>> բառարանի հրատարակումը
- ե) Մ. Չամչյանի <<Պատմություն Հայոց>> աշխատության հրատարակումը

1	2	3	4	5

3. Համապատասխանեցնել հեղինակների և նրանց ստեղծագործությունների անունները:
(1 միավոր)

- 1) Մեսրոպ Թաղիադյան
- 2) Զաքարիա Քանաքեռցի
- 3) Ալեքսանդր Երիցյան
- 4) Անտոն Գարագաշյան
- 5) Նիկողայոս Ադոնց

1	2	3	4	5

- ա) <<Քննական պատմություն հայոց>>
- բ) <<Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում>>
- գ) <<Ազգապատում>>
- դ) <<Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում>>
- ե) <<Պատմություն>>
- զ) <<Ճանապարհորդություն ի Հայս>>

4. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ: (1 միավոր)

- | | |
|--|------------|
| 1) Խամսայի (Արցախի) մելիքությունների
ինքնավարության ստեղծումը | ա) 1839 թ. |
| 2) Բարենորոգումների հրովարտակի (թանգիմաթ)
հրապարակումը սուլթանական կառավարության կողմից | բ) 1827 թ. |
| 3) Ռուս-պարսկական հաշտության
պայմանագրի կնքումը Գյուլիստանում | գ) 1813 թ. |
| 4) Ջեյթունի ապստամբությունը | դ) 1736 թ. |
| 5) Երևանի բերդի գրավումը ռուսական զորքի կողմից | ե) 1862 թ. |
| | զ) 1828 թ. |

1	2	3	4	5

գ. Գրել պատասխանները: (1 X 4 = 4 միավոր)

**1. Արցախի ազատագրական պայքարին վերաբերող պնդումներից որո՞նք են ճիշտ:
(0,5 X 2 = 1 միավոր)**

- ա) 1722 թ. վերջին հայկական զինուժի շնորհիվ ամբողջ Արցախն ազատագրվել էր թուրքական տիրապետությունից:
- բ) Արցախի ազատագրական պայքարի ոգեշնչողն ու կազմակերպիչը Գանձասարի հայոց կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանն էր:
- գ) Արցախում կազմակերպվեցին պաշտպանական հենակետային ամրոցներ (սղնախներ), որոնցից առավել հայտնի էին Գյուլիստանի, Շոշի (Շուշի), Ավետարանոցի, Ջրաբերդի և Քարագլխի սղնախները:
- դ) 1725 թ. մարտին թուրքական երեք զորամաս ներխուժեց Արցախի Ջրաբերդ գավառ:
- ե) 1729-1731 թթ. թուրք զավթիչների դեմ պայքարում էր Գյուլիստանի սղնախը՝ Ավան և Թարխան հարյուրապետների գլխավորությամբ:

--	--

**2. Հայ ազգային կուսակցություններին վերաբերող պնդումներից որո՞նք են սխալ:
(0,5 X 2 = 1 միավոր)**

- ա) 1885 թ. աշնանը Վան քաղաքում գաղտնության պայմաններում Մկրտիչ Փորթուգալյանը հիմնադրում է առաջին հայ ազգային կուսակցությունը:
- բ) Մ. Փորթուգալյանի աշակերտները հետևում էին Ֆրանսիայի Մարսել քաղաքում լույս տեսնող «Արմենիա» թերթի ուղղությանը, իրենց կոչում էին «Արմենական», այստեղից էլ ծնունդ է առել կուսակցության անվանումը:
- գ) Հայ իրականության մեջ երկրորդ՝ Հնչակյան կուսակցությունն առաջացավ Հայաստանից դուրս՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում:
- դ) 1892 թ. հուլիսի գաղտնի պայմաններում Թիֆլիսում տեղի ունեցավ ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը (համագումարը), որը կուսակցությունը վերանվանեց «Հայ հեղափոխականների դաշնակցություն»:
- ե) «Դրոշակում» 1894 թ. տպագրվեց ՀՅԴ ծրագիրը, որի «Նպատակ» բաժնում ասվում էր, որ ապստամբության ճանապարհով անհրաժեշտ է հասնել Արևմտյան Հայաստանի ազատությանը:

--	--

3. Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության 1917 թ. ապրիլին ընդունված որոշման վերաբերյալ ստորև բերված պնդումներից նշել երկուսը, որոնք ճիշտ չեն:

(0,5 X 2 = 1 միավոր)

ա) 1917 թ. ապրիլի 26-ին հրապարակվեց Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության որոշումը Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքում կառավարման նոր ձև մտցնելու մասին:

բ) Որոշման մեջ առաջին անգամ պաշտոնապես ճանաչվեց և ձևակերպում ստացավ Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը որպես վարչական առանձին միավոր՝ «Թուրքահայաստան» անունով:

գ) Մինչև Արևմտյան Հայաստանի կարգավիճակը վերջնականորեն որոշելը՝ գրավված տարածքում ստեղծված երեք հայկական մարզերը՝ Էրզրում, Խնուս, Վան, կառավարվելու էին գեներալ-կոմիսարի և նրա երկու օգնականների միջոցով:

դ) Գլխավոր կոմիսար նշանակվեց գեներալ Ավերյանովը, քաղաքացիական գծով տեղակալ՝ Հայկ Բժշկյանցը:

ե) Արևմտահայաստանի գեներալ-կոմիսարին ուղղված գաղտնի «Ղեկավար հրահանգներում» Ժամանակավոր կառավարությունը հրահանգում էր այդ տարածքում ապրած, նաև առհասարակ նախկին թուրքահպատակ հայերին, ինչպես նաև՝ քրդերին և լազերին, թույլատրել վերադառնալ այդ մարզերը :

--	--

4. Ստորև բերվածներից ընտրել երկու ճիշտ պնդում, որոնք վերաբերում են Մայիսյան ապստամբությանը (1920 թ.):

(0,5 X 2 = 1 միավոր)

ա) Բոլշևիկների Ալեքսանդրապոլի կոմիտեն նամակներ ուղարկեց Արմենկոմ (Հայաստանի կոմիտե)՝ խնդրելով զինված ապստամբություն սկսելու թույլտվություն:

բ) Արմենկոմը նամակով դիմեց ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյին, այնուհետև Ալեքսանդրապոլ ուղարկեց իր ներկայացուցիչներին՝ Դրաստամատ Տեր-Սիմոնյանին և Գևորգ Ղարիբջանյանին:

գ) Մայիսի 7-ին կայացած բոլշևիկների ընդլայնված խորհրդակցությունը որոշեց ապստամբությունը միաժամանակ սկսել Ալեքսանդրապոլից, Իջևանից, Նոյեմբերյանից և Արտաշատից:

դ) Մայիսի 5-ին հրաժարական տված Ա. Խատիսյանի կառավարությանը փոխարինած Ս. Վրացյանի բյուրո-կառավարությունը որդեգրեց կոշտ քաղաքականություն, սահմանվեցին խստագույն պատիժներ:

ե) Մոտենալով Ալեքսանդրապոլին՝ կառավարական զորքերի հրամանատար Սեպուհը վերջնազոր ներկայացրեց Ռազմահեղափոխական կոմիտեին՝ անձնատուր լինելու մասին:

զ) Մայիսի 26-ի երեկոյան վերջնազորի հարցը քննարկվեց Ռազմհեղկոմի նիստում, որոշվեց քաղաքն առանց դիմադրության հանձնել:

--	--

2) <<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>

(5 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1-4-րդ առաջադրանքներ: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկվածներից ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել վերջինը:

- 1) Հռոմեական կայսրության բաժանումը Արևելյան և Արևմտյան մասերի
- 2) Կոստանդնուպոլսի համալսարանի ստեղծումը
- 3) Մուհամեդի փախուստը (հիջրա) Մեքքային Մեդինա
- 4) Կորդովայի խալիֆայության ստեղծումը
- 5) Կիևի գրավումը Օլեգի կողմից. Հին Ռուսիա պետության ստեղծումը

2. Ո՞վ է <<Ֆիզարոյի ամուսնությունը>> օպերայի հեղինակը:

- 1) Ջ. Վերդի 2) Վ. Մոցարտ 3) Ջ. Ռոսինի 4) Լ. Բեթհովեն

3. Ե՞րբ Ավստրիական կայսրությունը վերածվեց երկմիասնական պետության՝ Ավստրո-Հունգարիա անունով:

- 1) 1848 թ. 2) 1849 թ. 3) 1866 թ. 4) 1867 թ

4. Ե՞րբ Ֆրանսիան դարձավ նախագահական հանրապետություն, իսկ Շարլ դը Գոլը՝ նրա առաջին նախագահը:

- 1) 1948 թ. 2) 1958 թ. 3) 1962 թ. 4) 1968 թ

բ. (1 X 2 = 2 միավոր)

1. Գործիչների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձությունների հետ: (1 միավոր)

- | | |
|---|--------------------------------------|
| 1) Խաչակրաց երրորդ արշավանքը | ա) Ուրբանոս II պապ |
| 2) Խաչակրաց շարժման սկիզբը | բ) Շահ Աքբար |
| 3) Երուսաղեմի գրավումը | գ) Շահ Ջահան |
| 4) Մեծ Մողոլի տերության հիմնումը
Հնդկաստանում | դ) Սալահ ադ Դին |
| 5) Թաջ-Մահալ մզկիթ-դամբարանի կառուցումն
Ագրայում | ե) Բաբուր
զ) Ռիչարդ I Առյուծասիրտ |

1	2	3	4	5

2. Մշակույթի ուղղությունները համապատասխանեցնել դրանք ներկայացնող հեղինակների անունների հետ: (1 միավոր)

- 1) Հ. Բյուլ
- ա) Երաժշտություն

- 2) Մ. Շագալ
- 3) Լ. Արմաթրոնգ
- 4) Ա. Տարկովսկի
- 5) Օ. Ռոդեն

- բ) Գրականություն
- գ) Ճարտարապետություն
- դ) Գեղանկարչություն
- ե) Կինոարվեստ
- զ) Քանդակագործություն

1	2	3	4	5

գ. (0,5 X 2 = 1 միավոր)

1. Բերված պնդումներից ընտրել երկուսը, որոնք չեն վերաբերում <<Սյունիսենյան գործարքին>> (1938 թ.):

- ա) 1938 թ. սեպտեմբերին Սյունիսենում տեղի ունեցավ հանդիպում՝ Չերչիլի, Դալադիեի, Հիտլերի և Մուսսոլինիի մասնակցությամբ:
- բ) 1938 թ. սեպտեմբերյան հանդիպման արդյունքում կայացավ <<Սյունիսենյան գործարքը>>:
- գ) Սուդեթի մարզը և Չեխոսլովակիայի մի շարք շրջաններ տրվեցի Գերմանիային, Լեհաստանին և Հունգարիային:
- դ) Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հույս ունեին, թե Եվրոպայում խաղաղությունն ապահովված է, սակայն արդեն 1939 թ. Գերմանիան զավթեց Չեխոսլովակիայի նաև մնացած մասը:
- ե) Չեխիան և Սլովակիան դարձան գերմանական պրոտեկտորատ, իսկ Մորավիայում ստեղծվեց ֆաշիստական կառավարություն:

1	2

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐՄԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (3 միավոր)

Հայ ազատագրական պայքարը 20-րդ դարի սկզբին

- ա. Ներկայացրեք հայ ժողովրդի պայքարը Ռուսաստանի գաղութային քաղաքականության դեմ: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր 1903 թ. հունիսի 12-ի օրենքի իրական նպատակը: Ի՞նչ ավարտ ունեցավ հայության միահամուռ պայքարը:
- բ. Ներկայացրեք հայ-թաթարական ընդհարումների պատճառները, սկիզբը և հետագա ընթացքը: Ովքե՞ր կազմակերպեցին և աչքի ընկան ինքնապաշտպանական կռիվներում:
- գ. Ներկայացրեք Հայոց եկեղեցու դիրքորոշումն ու գործունեությունը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ հետևանքներ ունեցան հայ-թաթարական ընդհարումները և որո՞նք են այդ իրադարձությունների պատմական դասերը:

Է. Մինասյան
Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր